

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

18 հունիսի 2019 թվականի

թիվ 101

քաղ. Մոսկվա

**Այն արտադրանքի ցանկի հաստատման մասին, որի առնչությամբ
մաքսային հայտարարագիրը ներկայացնելն ուղեկցվում է
«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար
նախապատրաստված նավթի անվտանգության մասին»**

**Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջներին համապատասխանության գնահատման մասին
փաստաթուղթը (համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի
վերաբերյալ տեղեկությունները) ներկայացնելով**

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 8-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 8-րդ կետին համապատասխան, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 294 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային տարածք այն արտադրանքի (ապրանքների) ներմուծման կարգի մասին, որի առնչությամբ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ» հիմնադրույթի 2-րդ կետի

«գ» ենթակետի իրագործման նպատակներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել այն արտադրանքի՝ կից ներկայացվող ցանկը, որի առնչությամբ մաքսային հայտարարագիրը ներկայացնելն ուղեկցվում է «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթը (համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները) ներկայացնելով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի 2019 թվականի հունիսի 18-ի
թիվ 101 որոշմամբ

ՑԱՆԿ

այն արտադրանքի, որի առնչությամբ մաքսային հայտարարագիրը ներկայացնելն ուղեկցվում է
«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության
մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթը
(համապատասխանության գնահատման մասին փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները) ներկայացնելով

Արտադրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Համապատասխանության գնահատման մասին փաստաթուղթ	Ծանոթագրություն
1	2	3	4
Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթը	2709 00 900 9	անձնագիր	

Ծանոթագրություն. Սույն ցանկը կիրառելու նպատակներով անհրաժեշտ է օգտագործել ինչպես արտադրանքի անվանումը, այնպես էլ
ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2018 թվականի

թիվ 118

քաղ. Մոսկվա

«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար

նախապատրաստված նավթի անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի

(ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական

կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում

իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և

չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ

պարունակող միջազգային ու տարածաշրջանային (միջպետական)

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական)

ստանդարտների ցանկի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 4-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի 2018 թվականի հուլիսի 24-ի
թիվ 118 որոշմամբ

Ց Ա Ն Կ

«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների

Համարը՝ ը/կ	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կառուցվածքային տարրը կամ տեխնիկական կանոնակարգման օբյեկտը	Ստանդարտի, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկայի նշագիրն ու անվանումը	Ծանոթագրություն
1	2	3	4
1	բաժին VI	ԳՕՍՏ 2517-2012 «Նավթ և նավթամթերքներ: Նմուշառման մեթոդներ»	
2		ԳՕՍՏ 31873-2012 «Նավթ և նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»	

Համարը՝ ը/կ	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կառուցվածքային տարրը կամ տեխնիկական կանոնակարգման օբյեկտը	Ստանդարտի, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկայի նշագիրն ու անվանումը	Ծանոթագրություն
1	2	3	4
3		ՄՏԲ ԻՍՕ 3170-2004 «Հեղուկ նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
4		ՄՏ ՂՀ ԻՍՕ 3170-2006 «Նավթ և նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
5		ՄՏ ՂՀ ԻՍՕ 3171-2007 «Նավթամթերքներ: Հեղուկ ածխաջրածիններ: Ավտոմատ նմուշառումը խողովակաշարերից»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
6	հավելված, ցուցանիշ «Ծմբաջրածնի զանգվածային բաժին»	ԳՕՍՏ 32918-2014 «Նավթ: Ծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»	
7		ԳՕՍՏ 33690-2015 «Նավթ և նավթամթերքներ: Ծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշումը գազաքրոմատագրման մեթոդով»	
8		ՄՏ ՂՀ 1473-2005 «Նավթ: Ծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
9		ԳՕՍՏ Ռ 50802-95 «Նավթ: Ծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
10	հավելված, ցուցանիշ «Մեթիլ-	ԳՕՍՏ 32918-2014 «Նավթ: Ծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների	

Համարը՝ ը/կ	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կառուցվածքային տարրը կամ տեխնիկական կանոնակարգման օբյեկտը	Ստանդարտի, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկայի նշագիրն ու անվանումը	Ծանոթագրություն
1	2	3	4
	և էթիլմերկապտանների գումարային զանգվածային բաժին»	որոշման մեթոդ»	
11		ԳՕՍՏ 33690-2015 «Նավթ և նավթամթերքներ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշումը գազաքրոմատագրման մեթոդով»	
12		ՍՏ ՂՀ 1473-2005 «Նավթ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
13		ԳՕՍՏ Ռ 50802-95 «Նավթ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
14	հավելված, ցուցանիշ «Ջրի զանգվածային բաժին»	ԳՕՍՏ 2477-2014 «Նավթ և նավթամթերքներ: Ջրի պարունակության որոշման մեթոդ»	
15		ԳՕՍՏ 33700-2015 «Նավթ: Ջրի պարունակության որոշումը թորման մեթոդով»	
16		ԳՕՍՏ 33733-2016 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում կոլոնաչափական տիտրման Կարլ Ֆիշերի մեթոդով»	
17		ՍՏ ՂՀ ԻՍՕ 10336-2004 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում: Կարլ Ֆիշերի պոտենցիաչափական տիտրման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
18		ՍՏ ՂՀ ԻՍՕ 10337-2004 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում:	կիրառվում է մինչև 2025 թվականի

Համարը՝ ը/կ	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կառուցվածքային տարրը կամ տեխնիկական կանոնակարգման օբյեկտը	Ստանդարտի, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկայի նշագիրն ու անվանումը	Ծանոթագրություն
1	2	3	4
		Կուլոնաչափական տիտրում՝ Կարլ Ֆիշերի մեթոդով»	հունվարի 1-ը
19		US ՂՀ 1314-2004 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում: Թորման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
20	հավելված, ցուցանիշ «Քլորային աղերի զանգվածային կոնցենտրացիա»	ԳՕՍՍ 21534-76 «Նավթ: Քլորային աղերի պարունակության որոշման մեթոդներ»	
21		ԳՕՍՍ 33703-2015 «Նավթ: Աղերի որոշումը էլեկտրաչափական մեթոդով»	
22		US ՂՀ 1693-2007 «Նավթ: Քլորային աղերի որոշման էլեկտրաչափական մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
23	հավելված, ցուցանիշ «Հագեցած գոլորշիների ճնշում»	ԳՕՍՍ 8.601-2010 «Չափումների միասնականության ապահովման պետական համակարգ: Նավթի և նավթամթերքների հագեցած գոլորշիների ճնշում: Չափումների մեթոդիկա»	
24		ԳՕՍՍ 1756-2000 «Նավթամթերքներ: Հագեցած գոլորշիների ճնշման որոշում»	
25		ԳՕՍՍ 28781-90 «Նավթ և նավթամթերքներ: Մեխանիկական դիսպերսման ապարատով հագեցած գոլորշիների ճնշման որոշման մեթոդ»	
26		ԳՕՍՍ 31874-2012 «Հում նավթ և նավթամթերքներ: Հագեցած գոլորշիների ճնշման որոշում՝ Ռեյդի մեթոդով»	
27		ԳՕՍՍ 33361-2015 «Նավթ: Գոլորշիների ճնշման որոշումն ընդլայնելու մեթոդով»	
28		US ՂՀ 1692-2007 «Նավթ: Գոլորշիների առաձգականությունը որոշելու մեթոդ VPCR: Ընդլայնման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
29	հավելված, ցուցանիշ	ԳՕՍՍ 33342-2015 «Նավթ: Օրգանական քլորի որոշման մեթոդներ»	

Համարը՝ ը/կ	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կառուցվածքային տարրը կամ տեխնիկական կանոնակարգման օբյեկտը	Ստանդարտի, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկայի նշագիրն ու անվանումը	Ծանոթագրություն
1	2	3	4
30	«Օրգանական քլորիդների գանգվածային բաժինը՝ մինչև 204°C ջերմաստիճանը եռալու գոլորշիացող չափամասում»	ԳՕՍՍ Ռ 52247-2004 «Նավթ: Քլորօրգանական միացությունների որոշման մեթոդներ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
31		ՍՏԲ 1558-2005 « Հում նավթ: Օրգանական քլորիդների պարունակության որոշման մեթոդներ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
32		ՍՏ ՂՀ ԱՍՍՄ Դ 4929-2011 «Հում նավթում օրգանական քլորիդների պարունակությունը որոշելու համար փորձարկումների ստանդարտ մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը
33		ՍՏ ՂՀ 1529-2006 «Նավթ: Քլորօրգանական միացությունների որոշման մեթոդ»	կիրառվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2018 թվականի

թիվ 119

քաղ. Մոսկվա

«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար

նախապատրաստված նավթի անվտանգության մասին»

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի

(ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական

կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում

իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և

չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ

պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների

կատարման, վերանայման) ծրագրի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ և 12-րդ ենթակետերով նախատեսված սկզբունքների իրագործման նպատակներով և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 7-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ «Տրանսպորտային փոխադրման և (կամ)

օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի 2018 թվականի հուլիսի 24-ի
թիվ 119 որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) պահանջները կիրառելու ու կատարելու և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման)

Համարը՝ ը/կ	ՄՄԴ ծածկագիրը	Միջպետական ստանդարտի նախագծի անվանումը Աշխատանքների տեսակները	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Մշակման ժամկետները		Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն՝ պատասխանատու մշակող
				սկիզբ	ավարտ	
1	2	3	4	5	6	7
1	75.040	ԳՕՍՏ 21534-76 «Նավթ: Քլորային աղերի պարունակության որոշման մեթոդներ»-ի վերանայում՝ փորձարկումների արդյունքների տրամադրման ճշտության և փորձարկումների արդյունքների վերարտադրելիության	հավելված, ցուցանիշ «Քլորային աղերի զանգվածային կոնցենտրացիա»	2019 թվական	2020 թվական	Ռուսաստանի Դաշնություն

Համարը՝ ը/կ	ՍՄԴ ծածկագիրը	Միջպետական ստանդարտի նախագծի անվանումը Աշխատանքների տեսակները	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Մշակման ժամկետները		Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն՝ պատասխանատու մշակող
				սկիզբ	ավարտ	
1	2	3	4	5	6	7
		մասով տվյալների բացակայության առնչությամբ				
2	75.040 75.080	ԳՕՍՏ «Նավթ և նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»-ի մշակում՝ ISO 3170:2004 «Petroleum liquids - Manual sampling»-ի հիման վրա՝ հաշվի առնելով ՄՏԲ ԻՍՕ 3170-2004 «Հեղուկ նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»-ը և ՄՏ ՂՀ ԻՍՕ 3170-2006 «Նավթ և նավթամթերքներ: Ձեռքով նմուշառման մեթոդներ»-ը	բաժին VI	2019 թվական	2020 թվական	Բելառուսի Հանրապետություն
3	75.040	ԳՕՍՏ 32918-2014 «Նավթ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»-ի վերանայում՝ հաշվի առնելով ՄՏ ՂՀ 1473-2005 «Նավթ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»-ը և ԳՕՍՏ Ռ 50802-95 «Նավթ: Ծծմբաջրածնի, մեթիլ- և էթիլմերկապտանների որոշման մեթոդ»-ը	հավելված, ցուցանիշ «Ծծմբաջրածնի զանգվածային բաժին»	2020 թվական	2021 թվական	Ռուսաստանի Դաշնություն
4	75.040	ԳՕՍՏ 33700-2015 «Նավթ: Ջրի պարունակության որոշումը թորման մեթոդով»-ի վերանայում՝ Ռուսաստանի Դաշնությունում դրա կիրառման համար անհրաժեշտ սարքավորումների բացակայության պատճառով՝ հաշվի առնելով ՄՏ ՂՀ 1314-2004 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում: Թորման մեթոդներ»-ը	հավելված, ցուցանիշ «Ջրի զանգվածային բաժին»	2020 թվական	2021 թվական	Ռուսաստանի Դաշնություն
5	75.040	Քլորոբանական միացությունների որոշման մեթոդի մասով միջպետական ստանդարտի մշակում՝ ՄՏ ՂՀ 1529-2006 «Նավթ. Քլորոբանական միացությունների որոշման	հավելված, ցուցանիշ «Օրգանական	2020 թվական	2021 թվական	Ռուսաստանի Դաշնություն

Համարը՝ ը/կ	ՍՄԴ ծածկագիրը	Միջպետական ստանդարտի նախագծի անվանումը Աշխատանքների տեսակները	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Մշակման ժամկետները		Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն՝ պատասխանատու մշակող
				սկիզբ	ավարտ	
1	2	3	4	5	6	7
		մեթոդ»-ի, ՍՏԲ 1558-2005 «Հում նավթ: Օրգանական քլորիդների պարունակության որոշման մեթոդներ»-ի և ԳՕՍՍ Ռ 52247-2004 «Նավթ: Քլորօրգանական միացությունների որոշման մեթոդներ»-ի հիման վրա	քլորիդների զանգվածային բաժինը՝ մինչև 20°C ջերմաստիճանը եռալով գոլորշիացող չափամասում»			
6	75.040 75.080	ԳՕՍՍ «Նավթ և նավթամթերքներ: Հեղուկ ածխաջրածիններ: Ավտոմատ նմուշառումը խողովակաշարերից»-ի մշակում՝ ՍՏ ԳՀ ԻՍՕ 3171-2007 «Նավթամթերքներ: Հեղուկ ածխաջրածիններ: Ավտոմատ նմուշառումը խողովակաշարերից»-ի հիման վրա	բաժին VI	2020 թվական	2021 թվական	Ղազախստանի Հանրապետություն
7	75.040	ԳՕՍՍ «Նավթ: Ջրի պարունակության որոշում: Կարլ Ֆիշերի պոտենցիալական տիտրման մեթոդ»-ի մշակում՝ ՍՏ ԳՀ ԻՍՕ 10336-2004 «Հում նավթ: Ջրի պարունակության որոշում: Կարլ Ֆիշերի պոտենցիալական տիտրման մեթոդ»-ի հիման վրա	հավելված, ցուցանիշ «Ջրի զանգվածային բաժին»	2020 թվական	2021 թվական	Ղազախստանի Հանրապետություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

6 մարտի 2018 թվականի

թիվ 36

քաղ. Մոսկվա

**«Տրանսպորտային փոխադրման և (կամ)
օգտագործման համար պատրաստված նավթի անվտանգության մասին»
Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 045/2017)
անցումային դրույթների վերաբերյալ**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ կետին, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 3-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 11-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման և չեղարկման կարգի 38-րդ կետի հինգերորդ պարբերությունը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից **որոշեց**.

1. Սահմանել, որ՝

ա) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող ակտերով կամ Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար պատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ համապատասխանաբար՝ տեխնիկական կանոնակարգ, արտադրանք) մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, վավեր են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, սակայն 2021 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Միության իրավունքի մաս կազմող ակտերով կամ անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում.

բ) մինչև 2021 թվականի հունվարի 1-ը թույլատրվում է առանց արտադրանքի համապատասխանության պարտադիր գնահատման մասին փաստաթղթերի և առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով) մակնշման այն արտադրանքի արտադրությունն ու անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ բաց թողնելը, որը մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Միության իրավունքի մաս կազմող ակտերով կամ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման.

գ) մինչև 2021 թվականի հունվարի 1-ը թույլատրվում են արտադրանքի արտադրությունն ու անդամ պետությունների տարածքներում շրջանառության մեջ բացթողումը՝ Միության իրավունքի մաս կազմող ակտերով կամ անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան, մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը տրամադրված կամ ընդունված՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերի առկայության դեպքում:

Արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում

շրջանառության նշանով՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Այդպիսի արտադրանքի մակնշումը Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում:

2. Խնդրել Ռուսաստանի Դաշնության կառավարությանը՝ անդամ պետությունների հետ համատեղ մինչև 2019 թվականի հունվարի 1-ն ապահովել հետևյալի մշակումն ու Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացումը՝

ա) տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու ու կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների կանոններ և մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջպետական ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրի նախագիծը.

բ) այն արտադրանքի ցանկի նախագիծը, որի առնչությամբ մաքսային հայտարարագրի ներկայացումն ուղեկցվում է տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերի ներկայացմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2017 թվականի

թ ի վ 8 9

քաղ. Մոսկվա

**«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար
նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական
տնտեսական միության
տեխնիկական կանոնակարգի մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **ո ր ո շ է ց .**

1. Ընդունել կից ներկայացվող՝ «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը (ԵԱՏՄ ՏԿ 045/2017):

2. Սահմանել, որ «Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին» Եվրասիական

տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը (ԵԱՏՄ ՏԿ 045/2017) ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշևսկի	Ա. Մամին	Տ. Աբդիգուլով	Ի. Շուվալով

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 89 որոշմամբ

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**Եվրասիական տնտեսական միության
«Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար
նախապատրաստված նավթի անվտանգության մասին»
(ԵԱՏՄ ՏԿ 045/2017)**

I. Կիրառության ոլորտը

1. Սույն տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին համապատասխան, ու դրանով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր՝ նավթի անվտանգության պահանջները՝ մարդու կյանքի և (կամ) առողջության պաշտպանության, գույքի, շրջակա միջավայրի պահպանության ապահովման և սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխման, ինչպես նաև էներգետիկ արդյունավետության և ռեսուրսախնայողության ապահովման նպատակով:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտը տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված՝ Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնվող և շրջանառության մեջ գտնվող նավթն է:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում այն նավթի վրա, որը մատակարարվում է՝ Միության մաքսային տարածքից դուրս արտահանման համար, մատակարարվում է պետական պաշտպանության պատվերով, պահվում է պետական

նյութական պահուստի պահպանվածությունն ապահովող կազմակերպություններում, ինչպես նաև նավթ պատրաստողի (արտադրողի) կողմից օգտագործվում է բացառապես սեփական կարիքների համար:

II. Հիմնական հասկացությունները

4. Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

նավթի անվտանգություն՝ նավթի վիճակ, որի դեպքում բացակայում են վնաս հասցնելու հետ կապված անթույլատրելի ռիսկերը.

նավթի բացթողումը շրջանառության մեջ՝ նավթ պատրաստողից (արտադրողից) նավթի առաջնային փոխանցումը վաճառողին և (կամ) սպառողին (այդ թվում՝ նավթ պատրաստողի (արտադրողի) պահեստից ուղարկումը կամ առանց պահեստավորման բեռնումը) կամ նավթի ներմուծումը՝ Միության մաքսային տարածքում առևտրային գործունեության ընթացքում վճարովի կամ անհատույց հիմքով տարածելու նպատակով.

նավթ պատրաստողը (արտադրողը)՝ իրավաբանական, այդ թվում՝ օտարերկրյա անձ, որն իր անունից իրականացնում է նավթի արդյունահանում կամ դրա արդյունահանում ու իրացում և որը պատասխանատու է սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին նավթի համապատասխանության համար, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է.

նավթ՝ մայրուղային խողովակաշարերով, երկաթուղային, ավտոմոբիլային և ջրային տրանսպորտով փոխադրման և (կամ) նավթավերամշակման և նավթաքիմիական արտադրություններում որպես հումք օգտագործման համար նախապատրաստված՝ ֆիզիկաքիմիական լայն կազմ ունեցող ածխաջրածինների բնական հանածո հեղուկ խառնուրդ.

նավթի շրջանառությունը շուկայում՝ նավթի շարժը նավթ պատրաստողից (արտադրողից) դեպի սպառողը.

նավթի խմբաքանակ՝ նավթի քանակի վերաբերյալ մեկ փաստաթղթով (երթուղային հանձնարարագիր, կամ նավթի ընդունման հանձնման ակտ, կամ բեռնագիր,

կամ կոնտսամենտ) և մեկ անձնագրով ուղեկցվող նավթի քանակ.

սպառող՝ նավթ պատվիրելու կամ ձեռք բերելու մտադրություն ունեցող կամ նավթ պատվիրող, ձեռք բերող կամ օգտագործող՝ իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ.

վաճառող (այդ թվում՝ ներմուծող)՝ իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որը Միության անդամ պետության ռեզիդենտ է, Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում է նավթի իրացում սպառողին և պատասխանատու է Միության շուկայում նավթի տեղաբաշխման և սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին նավթի համապատասխանության համար, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է.

նավթ պատրաստողի (արտադրողի) կողմից լիազորված անձ՝ Միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա տարածքում գրանցված իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որը նավթի համապատասխանությունը գնահատելիս և Միության շուկայում այն շրջանառության մեջ բաց թողնելիս նավթ պատրաստողի (արտադրողի), այդ թվում՝ օտարերկրյա նավթ պատրաստողի (արտադրողի) հետ կնքված պայմանագրի հիման վրա այդ նավթ պատրաստողի (արտադրողի) անունից իրականացնում է գործողություններ, ինչպես նաև կրում պատասխանատվություն սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին նավթի համապատասխանության համար, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է:

III. Միության շուկայում նավթի շրջանառության կանոնները

5. Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնվող և շրջանառության մեջ գտնվող նավթը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև Միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է:

6. Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնվող և շրջանառության մեջ գտնվող նավթի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի անձնագրով, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

ա) այն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված այն ֆիզիկական անձի ազգանունը, անունն ու հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը, որը նավթ պատրաստող (արտադրող) կամ վաճառող (այդ թվում՝ ներմուծող) կամ նավթ պատրաստողի (արտադրողի) կողմից լիազորված՝ անձագիրը ձևակերպած անձ է.

բ) նավթ պատրաստողի (արտադրողի) ապրանքային նշանը (առկայության դեպքում).

գ) այն փաստաթղթի (առկայության դեպքում) նշագիրը և անվանումը, որին համապատասխան նավթը պատրաստվել (արտադրվել) է, և դրա անվանումն ու նշագիրը՝ այդ փաստաթղթին համապատասխան.

դ) նավթի ցուցանիշների նորմատիվ արժեքները, որոնք սահմանվել են նավթի ցուցանիշներին ներկայացվող պահանջներում՝ հավելվածի համաձայն, և այն փաստաթղթում, որին համապատասխան նավթը պատրաստվել (արտադրվել) է, ինչպես նաև լաբորատոր փորձարկումների փաստացի արդյունքները՝ նշելով սեփական փորձարկման լաբորատորիայի կամ Եվրասիական տնտեսական միության՝ համապատասխանության գնահատման հարցերով մարմինների միասնական ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր) ընդգրկված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի անվանումը.

ե) խմբաքանակի համարը.

զ) Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

է) անձնագրի համարը և տրման ամսաթիվը.

ը) անձնագիրը ձևակերպած անձի ազգանունը, անվան սկզբնատառերը և ստորագրությունը:

7. Անձնագիրը ձևակերպվում է ռուսերենով և Միության անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում՝ Միության այն անդամ պետության պետական լեզվով (պետական լեզուներով), որի տարածքում իրացվում է նավթը:

8. Նավթն իրացնելիս վաճառողը (այդ թվում՝ ներմուծողը) պարտավոր է սպառողի պահանջով ներկայացնել անձնագրի պատճենը:

9. Անձագիրը ձևակերպվում է նավթի տրանսպորտային փոխադրման, պահպանման, վերամշակման և իրացման նպատակների համար նավթն ընդունելիս (հանձնելիս):

IV. Նավթի անվտանգության պահանջները

10. Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնվող և շրջանառության մեջ գտնվող նավթը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի հավելվածում նշված ցուցանիշներին ներկայացվող պահանջներին:

11. Նավթի պատրաստման (արտադրման) և տրանսպորտային փոխադրման ժամանակ չի թույլատրվում քրոօրգանական միացություններ պարունակող քիմիական ռեագենտների կիրառումը:

V. Անվտանգության պահանջներին

նավթի համապատասխանության ապահովումը

12. Նավթի անվտանգությունն ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների, ինչպես նաև Միության այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմամբ, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է:

13. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին նավթի համապատասխանության գնահատման ժամանակ անցկացվող փորձարկումների մեթոդները սահմանվում են միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներով, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման և տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոնները:

VI. Նավթի համապատասխանության գնահատումը

14. Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնվելուց առաջ նավթը ենթակա է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասով գնահատման, որն իրականացվում է փորձարկումների տեսքով՝ անձնագրի ձևակերպմամբ:

15. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին նավթի համապատասխանության գնահատումն իրականացվում է Միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված՝ նավթ պատրաստող (արտադրող) կամ վաճառող (այդ թվում՝ ներմուծող) կամ նավթ պատրաստողի (արտադրողի) կողմից լիազորված անձ հանդիսացող դիմումատուի (իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի) կողմից՝ չափումների միասնականության ապահովման բնագավառում Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող չափման միջոցների օգտագործմամբ:

16. Փորձարկումների անցկացման կարգը ներառում է՝

ա) նավթի փորձանմուշների (նմուշների) ընտրությունը.

բ) սեփական փորձարկման լաբորատորիայի կամ Միասնական ռեեստրում ընդգրկված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից նավթի փորձանմուշների (նմուշների) փորձարկումների անցկացումը.

գ) փորձարկումների արդյունքները և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին նավթի համապատասխանության մասին եզրակացությունն անձնագրի մեջ գրանցելը:

17. Փորձարկումներն իրականացվում են սույն տեխնիկական կանոնակարգի 13-րդ կետում նշված ստանդարտներին համապատասխան:

VII. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով նավթի մակնշումը

18. Նավթը, որը համապատասխանում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև Միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի

պահանջներին, որոնց գործողությունը դրա վրա տարածվում է, և որը, սույն տեխնիկական կանոնակարգի VI բաժնի համաձայն, անցել է համապատասխանության գնահատման ընթացակարգը, մակնշվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

19. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է նախքան նավթը Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնելը:

20. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը դրվում է անձնագրում:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Տրանսպորտային փոխադրման և (կամ)
օգտագործման համար
նախապատրաստված նավթի
անվտանգության մասին» Եվրասիական
տնտեսական միության տեխնիկական
կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 045/2017)

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր

Նավթի ցուցանիշներին ներկայացվող

Ցուցանիշի անվանումը	Նորմատիվ արժեքները
Ծծմբաջրածնի զանգվածային մասը, մլն ⁻¹ (ppm), ոչ ավելի	100 (20*)
Մեթիլ- և էթիլմերկապտանների գումարային զանգվածային մասը, մլն ⁻¹ (ppm), ոչ ավելի	100 (40*)
Ջրի զանգվածային մասը, %, ոչ ավելի	1 (0,5*)
Քլորային աղերի զանգվածային կոնցենտրացիան, մգ/դմ ³ , ոչ ավելի	900 (100*)
Հազեցած գոլորշիների ճնշումը, կՊա (մմ ս. ս.), ոչ ավելի	66,7 (500)**
Օրգանական քլորիդների զանգվածային մասը՝ մինչև 204°C ջերմաստիճանը եռալով գոլորշիացող չափամասում, մլն ⁻¹ (ppm), ոչ ավելի	6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

* Մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման կամ վերամշակման համար
նավթի փոխանցման դեպքում

** Չի որոշվում նավթի պնդացման՝ 10 °C եւ ավելի բարձր ջերմաստիճանի պայմաններում

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ
15 հուլիսի 2011 թ. N 711

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՆՇԱՆԻ ԵՎ ԴՐԱ
ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Մաքսային միության հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշման,
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
20.07.2012 N 61, 17.03.2016 N 22 որոշումների խմբագրությամբ)

Մաքսային միության հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել կից ներկայացվող.
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման
խմբագրությամբ)

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության
միասնական նշանի պատկերը.
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման
խմբագրությամբ)

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության
միասնական նշանի կիրառման կարգը:
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման
խմբագրությամբ)

2. Մաքսային միության Հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի N 605 Որոշումը
ճանաչել ուժը կորցրած:
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման
խմբագրությամբ)

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ.

Բելառուսի
Հանրապետությունից
Ս.ՌՈՒՄԱՍ

Ղազախստանի
Հանրապետությունից
Ժ.ԱՅՏԺԱՆՈՎԱ

Ռուսաստանի
Դաշնությունից
Ի.ՇՈՒՎԱԼՈՎ

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ**

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Մաքսային միության հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշման,
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
20.07.2012 N 61, 17.03.2016 N 22 որոշումների խմբագրությամբ)



Նկար 1

Նկար 2

Նկարագրություն

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի
շրջանառության միասնական նշանի պատկերի
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության
միասնական նշանի պատկերն իրենից ներկայացնում է երեք ռճավորված տառերի՝ "Ե",
"Ա" և "Հ", համադրություն, որոնք գծագրորեն պատկերվել են ուղիղ անկյունների
օգտագործմամբ, ունի հավասար բարձրություն ու լայնություն, կազմում է քառակուսու
ճշգրիտ համամասնություններ՝ բաց (նկար 1) կամ հակադրական ֆոնին (նկար 2):
(Մաքսային միության Հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշման, Եվրասիական
տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

ԵԱՀ-ն վերձանվում է որպես Եվրասիական համապատասխանություն (Eurasian
Conformity):

ԿԱՐԳ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ՇՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Մաքսային միության հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշման,
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

1. Կիրառման ոլորտը

Սույն Կարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան և սահմանում է Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառման կանոնները, ձևը և չափերը (այսուհետ՝ շրջանառության միասնական նշան): (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

2. Ընդհանուր դրույթներ

Շրջանառության միասնական նշանը վկայում է, որ նրանով մակնշված ապրանքն անցել է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերում (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում) սահմանված համապատասխանության գնահատման (հաստատման) բոլոր ընթացակարգերը և համապատասխանում է տվյալ արտադրանքի վրա տարածվող՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական բոլոր կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում) պահանջներին: (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

Շրջանառության միասնական նշանով մակնշումը իրականացվում է նախքան արտադրանքը Եվրասիական տնտեսական միության շուկա դուրս բերելը: (պարբերությունը լրացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 20.07.2012 N 61 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

3. Շրջանառության միասնական նշանի պատկերի նկարագրությունը

3.1. Շրջանառության միասնական նշանն ունի հետևյալ պատկերը (նկար 1 և նկար 2). (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 20.07.2012 N 61 որոշման խմբագրությամբ)



Նկար 1

Նկար 2

Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի
շրջանառության միասնական նշանի պատկերի
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

3.2. Շրջանառության միասնական նշանի պատկերը ներկայացնում է երեք ոճավորված տառերի՝ "Ե", "Ա" և "Հ", համադրություն, որոնք գծագրորեն պատկերվել են ուղիղ անկյունների օգտագործմամբ, ունի հավասար բարձրություն ու լայնություն, կազմում է քառակուսու ճշգրիտ համամասնություններ՝ բաց (նկար 1) կամ հակադրական ֆոնին (նկար 2):

(Մաքսային միության Հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

ԵԱՀ-ն վերծանվում է որպես Եվրասիական համապատասխանություն (Eurasian Conformity):

3.3. Շրջանառության միասնական նշանի չափերը որոշում է արտադրողը, արտադրողի լիազորված անձը, ներմուծողը (մատակարարը), որը ստացել է վերջինիս կիրառության իրավունքը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 20.07.2012 N 61 որոշման խմբագրությամբ)

Շրջանառության միասնական նշանի հիմնական չափը պետք է կազմի առնվազն 5 մմ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

Շրջանառության միասնական նշանի չափերը պետք է երաշխավորեն վերջինիս տարրերի հստակությունը և դրանց նկատելիությունը անզեն աչքով՝ օբյեկտի ընդհանուր գունավոր ֆոնին:

Շրջանառության միասնական նշանի պատկերը մասշտաբի ցանցի վրա ներկայացված է 3-րդ և 4-րդ նկարներին:

(պարբերությունը լրացված է Մաքսային միության հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշմամբ)

	1	2	3	4	5	6	7	8	9	
1	■	■		■	■	■		■	■	1
2										2
3										3
4										4
5	■			■						5
6										6
7										7
8										8
9	■	■		■	■	■		■	■	9
	1	2	3	4	5	6	7	8	9	

Նկար 3

	1	2	3	4	5	6	7	8	9	
1			■							1
2		■			■			■		2
3			■							3
4		■								4
5										5
6		■			■			■		6
7			■							7
8		■								8
9										9
	1	2	3	4	5	6	7	8	9	

Նկար 4

(լրացված է Մաքսային միության հանձնաժողովի 23.09.2011 N 800 որոշմամբ)

3.4. Շրջանառության միասնական նշանը կարող է իրագործվել արտադրանքի ծառայության (պիտանիության) ողջ ժամկետի ընթացքում դրա հստակ և պարզ պատկերն ապահովող ցանկացած եղանակով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 20.07.2012 N 61 որոշման խմբագրությամբ)

4. Շրջանառության միասնական նշանի կիրառման կարգը
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

Արտադրողները, արտադրողի կողմից լիազորված անձինք, արտադրանք ներմուծողները (մատակարարները) իրավունք ունեն մակնշելու այն շրջանառության միասնական նշանով, եթե արտադրանքն անցել է Եվրասիական տնտեսական միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով) սահմանված համապատասխանության գնահատման բոլոր սահմանված ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ ցանկացած պետության տարածքում, ինչը հաստատված է Եվրասիական տնտեսական միությունում համապատասխանության գնահատման համապատասխան ձևերի համար նախատեսված փաստաթղթերով:

5. Շրջանառության միասնական նշանի կիրառման կանոնները

5.1. Շրջանառության միասնական նշանը փակցվում է արտադրանքի յուրաքանչյուր միավորի, փաթեթավորման կամ ուղեկցող փաստաթղթերին:

5.2. Շրջանառության միասնական նշանի պատկերը պետք է լինի միագույն և հակադրություն կազմի այն մակերեսի գույնի հետ, որին փակցվել է:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

5.3. Արտադրանքի, տարայի (փաթեթավորման) և փաստաթղթերին շրջանառության միասնական նշանի փակցման տեղը սահմանվում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգում (Մաքսային միության տեխնիկական

կանոնակարգում):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

5.4. Չի թույլատրվում այնպիսի մակնշում, նշաններ փակցնելը և մակագրություններ կատարելը, որոնք կարող են սպառողներին և շահագրգռված անձանց մոլորության մեջ գցել շրջանառության միասնական նշանի նշանակության և պատկերի վերաբերյալ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 17.03.2016 N 22 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքում, եթե արտադրանքի վրա փակցվում են համապատասխանության այլ նշաններ, այդ թվում՝ արտադրանքի հավաստագրման կամավոր համակարգերի համապատասխանության նշանները, ապա դրանք չպետք է վատացնեն շրջանառության միասնական նշանի տեսանելիությունը, հստակությունը և ընթեռնելիությունը:

(5.4 կետը լրացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 20.07.2012 N 61 որոշմամբ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ
28 հունվարի 2011 թ. N 526

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ
ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
23.11.2012 N 102 որոշման խմբագրությամբ)

Բեղառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի իրականացման նպատակով Մաքսային միության Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Արտադրանքի միասնական ցանկ, որի նկատմամբ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ (կից ներկայացվում է):

2. Մաքսային միության անդամ պետություններում բժշկական ապրանքների (բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության արտադրատեսակների) պետական գրանցման տարբեր ընթացակարգերի առկայությամբ պայմանավորված՝ Կողմերին հանձնարարել.

մշակել տվյալ ոլորտում Կողմերի մոտեցումների միասնականացման հնարավորությունը.

անհրաժեշտության դեպքում մշակել համապատասխան միջազգային պայմանագրի նախագիծ.

այդ աշխատանքի արդյունքներով որոշում ընդունել Մաքսային միության «Բժշկական նշանակության արտադրատեսակների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի մշակման նպատակահարմարության մասին:

Մինչև սույն հարցով որոշում ընդունելը կասեցնել Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգի մշակումը:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ.

Բեղառուսի
Հանրապետությունից
Ս. ՌՈՒՄԱՍ

Ղազախստանի
Հանրապետությունից
ՈՒ. ՇՈՒԿԵԵՎ

Ռուսաստանի
Դաշնությունից
Ի. ՇՈՒՎԱԼՈՎ

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՑԱՆԿ
ԱՐՏԱԴԻԱՆՔԻ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի
23.11.2012 N 102 որոշման խմբագրությամբ)

1. Մեքենաներ և սարքավորումներ
2. Ցածրավոլտ սարքավորումներ
3. Բարձրավոլտ սարքավորումներ
4. Գազակերպ վառելիքով աշխատող սարքեր
5. Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումներ
6. Ճնշման տակ աշխատող անոթներ
7. Սարքավորումներ պայթյունավտանգ միջավայրերում աշխատելու համար
8. Զվարճահարմարանքներ, մանկական խաղահրապարակների սարքավորումներ
9. Վերելակներ
10. Անվավոր փոխադրամիջոցներ
11. Տրակտորներ
12. Գյուղատնտեսական տեխնիկա
13. Մեքենաներ անտառային տնտեսության համար
14. Դողեր
15. Երկաթուղային փոխադրամիջոցի շարժակազմ, այդ թվում՝ բարձրարագընթաց
16. Մետրոպոլիտենի շարժակազմ
17. Թեթև ուղևային փոխադրամիջոցներ, տրամվայներ
18. Ծովային փոխադրամիջոցային օբյեկտներ
19. Ներքին ջրային փոխադրամիջոցային օբյեկտներ
20. Փոքրածավալ նավեր

21. Շենքեր և շինություններ
22. Շինարարական նյութեր և արտադրանքներ
23. Երկաթուղային փոխադրամիջոցի ենթակառուցվածք, այդ թվում՝ բարձրարագընթաց
24. Մետրոպոլիտենի ենթակառուցվածք
25. Ավտոմոբիլային ճանապարհներ
26. Հրատեխնիկական կազմեր և դրանք պարունակող արտադրատեսակներ
27. Քաղաքացիական կիրառության պայթուցիկ նյութեր և դրանք պարունակող արտադրատեսակներ
28. Թեթև արդյունաբերության արտադրանք (պատրաստի հատովի ապրանքներ, գորգեր և գորգային արտադրատեսակներ, տրիկոտաժի, կարի և կաշվե գալանտերեայի արտադրատեսակներ, կոշիկ, մորթի և մորթե արտադրատեսակներ)
29. Խաղալիքներ
30. Ապրանքներ երեխաների և դեռահասների համար
31. Երեխաների խնամքի պարագաներ
32. Սպասք
33. Սանիտարահիգիենիկ նշանակության արտադրատեսակներ
34. Օծանելիքա-կոսմետիկական արտադրանք
35. Բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ
36. Տարա և փաթեթավորում
37. Անհատական պաշտպանության միջոցներ
38. Հրդեհային անվտանգության ապահովման միջոցներ
39. Հրդեհաշիջման միջոցներ
40. Բժշկական ապրանքներ
41. Սանիտարա-տեխնիկական արտադրատեսակներ
42. Կահույքային արտադրանք
43. Քիմիական արտադրանք
44. Սինթետիկ լվացող միջոցներ
45. Կենցաղային քիմիայի ապրանքներ

46. Լաքաներկանյութեր և լուծիչներ
47. Պարարտանյութեր
48. Բույսերի պաշտպանության միջոցներ
49. Բենզիններ, դիզելային և սավի վառելիք, վառելիք ռեակտիվ շարժիչների համար և վառքի մագուիթ
50. Քսանյութեր, յուղեր և հատուկ հեղուկներ
51. Ջրի, գազի, ջերմային էներգիայի, էլեկտրական էներգիայի հաշվառման սարքեր և համակարգեր
52. Նավթի, դրա վերամշակման արդյունքների հաշվառման սարքեր և համակարգեր
53. Մնդի արտադրանք
54. Ալկոհոլային արտադրանք
55. Կերեր և կերային հավելումներ
56. Հացահատիկ
57. Ծխախոտային արտադրանք
58. Հրացան որսի և մարզական, դրա համար նախատեսված զինամթերք
59. Էլեկտրակապի միջոցներ
60. Ածուխ և դրա վերամշակման արտադրանք
61. Հեղուկացված ածխաջրածնային գազեր՝ որպես վառելիք օգտագործելու համար
62. Մարդու մաշկի հետ շփվող նյութեր
63. Բնական և տեխնադին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված արտադրանք
64. Փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթ
65. Փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված բնական այրվող գազ
66. Մայրուղային խողովակաշարեր՝ հեղուկ և գազակերպ ածխաջրածինների փոխադրման համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ